Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:
Մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք այցելել Բանկի ինտերնետային կայք unibank@unibank.am հասցեով, (ուշադրություն դարձնել տեղեկատվական ամփոփագրի ուժի մեջ մտնելու ամսաթվին), դիմել Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարել Բանկի Հեռախոսազանգերի կենտրոն՝ +(374) 10 71 22 22, +(374) 10 59 55 55 հեռախոսահամարներով:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

«ՀՀ սահմանամերձ և առանձին բնակավայրերում ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության ծրագիր»

	Հիմնական պայմաններ	
1	**Անվանում**	Հիփոթեքային վարկեր՝ ՀՀ սահմանամերձ և առանձին բնակավայրերում ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության ծրագրի շրջանակներում
2	**Տեսակ**	Հիփոթեքային վարկ
3	**Նպատակ**	Սահմանամերձ և առանձին բնակավայրերում անհատական բնակելի տուն կառուցելու / կառուցապատումը շարունակելու նպատակով
4	**Վարկառուի նկատմամբ պահանջները**	• Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցված ամուսնության մեջ գտնվող, առնվազն մեկ անչափահաս երեխա և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող ամուսիններ* կամ • Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցված ամուսնության մեջ գտնվող, անչափահաս երեխա չունեցող և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող ամուսիններ*, որոնց տարիքների հանրագումարը չի գերազանցում 75-ը (ներառյալ), կամ • առնվազն մեկ անչափահաս երեխա և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող միայնակ ծնող՝ այրի կամ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցված ամուսնության մեջ չգտնվող կին, • առանձին բնակավայրերի դեպքում՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցված ամուսնության մեջ գտնվող, առնվազն մեկ՝ 10 տարին չլրացած երեխա և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող ամուսիններ* կամ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցված ամուսնության մեջ չգտնվող կին, որոնք ծրագրին դիմելու օրվա դրությամբ նախորդ 1 տարվա ընթացքում հաշվառված չեն եղել Երևան քաղաքում, • առանձին բնակավայրերի դեպքում՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցված ամուսնության մեջ գտնվող, առնվազն մեկ՝ 10 տարին չլրացած երեխա և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող ամուսիններ* կամ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցված ամուսնության մեջ չգտնվող կին, որոնցից առնվազն մեկն ուսուցչի պահանջները բավարարող անձ է: * ***(ամուսիններից առնվազն մեկը) ծրագրին դիմելու օրվա դրությամբ նախորդ 1 տարվա ընթացքում պետք է հաշվառված լինեն տվյալ բնակավայրում:*** ***Շահառուները ծրագրին դիմելու օրվա դրությամբ նախորդ 1 տարվա ընթացքում չպետք է ունենան անձնական կամ ընդհանուր համատեղ կամ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով (50 տոկոս և ավելի մասնաբաժնով) պատկանող բնակելի անշարժ գույք Երևան քաղաքում կամ «Գույքի նկատմամբ իրավունքների պետականագրանցման մասին» օրենքով սահմանված կարգով գրանցված գնման իրավունք Երևան քաղաքում***
5	**Սահմանամերձ բնակավայր**	Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված՝ «Սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերի ցանկում» ընդգրկված գյուղական բնակավայր. https://www.unibank.am/hy/service/mort/7906/
6	**Առանձին բնակավայր**	• Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Գոմք և Չիվա, • Արագածոտնի մարզի Լուսակն, Հացաշեն, Սորիկ, • Գեղարքունիքի մարզի Ավազան, Արփունք, Լեռնահովիտ, • Տավուշի մարզի Աճարկուտ, • Լոռու մարզի Հագվի, Ամոջ,Մեդովկա, • Սյունիքի մարզի Գորայք, Ծղուկ, Իշխանասար, Շաքի բնակավայրեր:
7	**Արժույթ**	ՀՀ դրամ
7	**Վարկի նվազագույն/առավելագույն գումար**	2,000,000 – 21,000,000 ՀՀ դրամ

8	**Տարեկան նվազագույն տոկոսադրույք**	13%
9	**Տարեկան փաստացի տոկոսադրույքը**[1]	0.01% - 0.15%
10	**Վարկի առավելագույն ժամկետ**	120 ամիս
11	**Աջակցության սահմանաչափեր**	• Աջակցության չափը կազմում է հիփոթեքային վարկով անհատական բնակելի տուն կառուցելու (կառուցապատումը շարունակելու) դեպքում հիփոթեքային վարկի մայր գումարի ամսական վճարների մարման համար՝ հանրագումարային մինչև 16.0 մլն դրամ, բայց ոչ ավելի, քան ամսական 277.0 հազ. դրամ, իսկ տոկոսագումարների մարման համար՝ մինչև 13%, հանրագումարային մինչև 12.668 մլն դրամ, բայց ոչ ավելի, քան ամսական 203.0 հազ. դրամ, • Տավուշի մարզի Բաղանիս, Բերքաբեր, Կիրանց և Ոսկեպար բնակավայրերում անհատական բնակելի տուն կառուցելու (կառուցապատումը շարունակելու) նպատակով տրամադրվող հիփոթեքային վարկերի դեպքում աջակցության չափը հիփոթեքային վարկի մայր գումարի ամսական վճարների մարման համար կազմում է հանրագումարային մինչև 21.0 մլն դրամ, բայց ոչ ավելի, քան ամսական 366.0 հազ դրամ, իսկ տոկոսագումարների մարման համար հաստատուն տոկոսադրույքով վարկավորման դեպքում՝ մինչև 13%, հանրագումարային մինչև 16.626 մլն դրամ, բայց ոչ ավելի, քան ամսական 266.0 հազ դրամ: Տվյալ սահմանաչաձը կգործի, եթե շահառու հանդիսացող ամուսիններից որևէ մեկն ունի բացառապես նշված բնակավայրի հաշվառում վերջին 1 տարվա կտրվածքով:
12	**Վարկ հարաբերած գրավի արժեք `LTV**	Չի սահմանվում
13	**Տրամադրման եղանակ**	Անկանխիկ/Վարկը միանվագ փոխանցվում է վարկառուի բանկային հաշվին:
14	**Անվանական տոկոսադրույքի փոփոխման կարգ և պայմաններ՝ նախատեսելու դեպքում**	Չի սահմանվում
15	**Պարտադիր վճարման ենթակա վճարների ցանկ և դրանց չափ/միջակայք**	Չի սահմանվում
16	**Վարկի մարման կարգը**	Վարկի ամենամսյա հավասարաչափ կամ անուիտետային մարումներով
17	**Ապահովվածությունը**	Կառուցապատվող գույքը
18	**Գրավի գնահատումը**	Պարտադիր, լիցենզավորված անկախ գնահատող կազմակերպության կողմից: *Իրականացվում է վարկառուի միջոցներով*
19	Գրավադրվող գույքը գնահատվում և ապահովագրվում է Բանկի հետ համագործակցող ընկերություններից որևէ մեկի կողմից /ցանկը տես այստեղ/: **Օժանդակ ծառայություններից օգտվելու գնային միջակայքը հետևյալն է՝** • գույքի գնահատում՝ 15,000 ՀՀ դրամ **Այլ ծախսեր**՝** • նոտարական ծառայությունների վճար՝ 15,000 - 20,000, ներառյալ ամուսնության վերաբերյալ հայտարարությունների համաձայնագրերը, • գույքի պետական գրանցման վճար՝ 72,400 ՀՀ դրամ: **Ներառված չեն փաստացի տոկոսադրույքի հաշվարկի մեջ*	
20	**Ապահովագրության պահանջի առկայություն**	Չի սահմանվում
21	**Կոմիսիոն վճարներ**	• Կանխիկացում՝ համաձայն Բանկի սակագների, • Վարկային հայտի ուսումնասիրության վճար՝ համաձայն Բանկի սակագների:
22	**Լրացուցիչ երաշխավորություն**	Ըստ Բանկի պահանջի
23	**Նվազագույն կանխավճար**	Չի սահմանվում
24	**Տույժերը**	Երկու և ավելի հաջորդող աշխատանքային օր ժամկետանցի դեպքում ժամկետանց գումարի և/կամ տոկոսի 2%-ի չափով միանվագ տույժ
25	**Գրավի նկատմամբ պահանջներ**	Սահմանամերձ և Առանձին բնակավայրերում ընդգրկված գույք
26	**Վարկի վաղաժամկետ մարման հնարավոր դեպքերը և պայմանները**	Առանց սահմանափակումների
27	**Վարկի ձևակերպման վայր**	Բանկի մասնաճյուղեր
28	**Որոշման կայացման և որոշման մասին տեղեկացնելու առավելագույն ժամկետ**	4 աշխատանքային օր Հաճախորդին վարկային հայտի վերաբերյալ կայացրած որոշման մասին բանկը տեղյակ է պահում 1 աշխատանքային օրվա ընթացքում:
29	**Վարկը սպառողի տրամադրելու կարգ**	գրավի իրավունքի պետական գրանցումից հետո 1 աշխատանքային օր
30	**Դրական որոշման գործոններ**	- ՀՀ ռեզիդենտ Ֆիզիկական անձ - Գործող ժամկետանցի / դասակարգման բացակայություն,

		- Բացասական վարկային պատմության բացակայություն՝ համաձայն Բանկի Վարկային քաղաքականության, - Տարիքային սահմանափակում ՝ 21-65 տարեկանը ներառյալ:
31	**Բացասական որոշման գործոններ**	- ՀՀ ոչ ռեզիդենտ Ֆիզիկական անձ - բացասական վարկային պատմության առկայություն - հիմնավորված եկամտի բացակայություն - տարիք՝ մինչև 21տ և 65տ-ից բարձր
32	**Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ**	- դիմում - անձնագիր(ID), սոցիալական քարտ(տեղեկանք սոցիալական քարտի բացակայության վերաբերյալ՝ սոցիալական քարտի բացակայության դեպքում) - Ամուսնության վկայական /եթե վարկառուն ամուսնացած է/ - Երեխաների ծննդյան վկայականները /առկայության դեպքում/ - Տեղեկանք բնակության վայրից /3-րդ ձև ԲՇՏ-ից/, Եթե վարկառուն վարձու աշխատող է, ապա. - Եկամուտների մասին տեղեկանք գործատուից, որտեղ նշվում է վարկառուի զբաղեցրած պաշտոնը, աշխատանքային ստաժը տվյալ կազմակերպությունում և ամսական եկամտի չափը - Տվյալներ նախկին զբաղվածության մասին՝ գործատուն, զբաղեցրած պաշտոնը, յուրաքանչյուր կազմակերպությունում աշխատանքի ստաժը /պահանջվում է միայն այն դեպքում, եթե վարկառուի աշխատանքային ստաժը ընթացիկ աշխատավայրում փոքր է 12 ամսից և դա նրա առաջին աշխատավայրը չէ/. - Տվյալներ այլ եկամուտների վերաբերյալ /առկայության դեպքում/ - Վարկառուի ամուսնացած լինելու դեպքում ամուսնու/կնոջ եկամուտների մասին տեղեկանք ոչ պարտադիր/, Եթե Վարկառուն ինքնազբաղված է, ապա. - Հարկ վճարողի հարկային համարը /ՀՎՀՀ/ - Գրանցման վկայական, կանոնադրություն /առկայության դեպքում/, - Գործունեության տվյալ տեսակով զբաղվելու թույլտվության փաստաթղթերը, եթե օրենսդրության համաձայն տվյալ գործունեության համար անհրաժեշտ է համապատասխան մարմինների կողմից հատուկ թույլտվություն - Վերջին 1 տարվա ֆինանսական և հարկային հաշվետվությունները՝ հաստատված հարկային մարմինների կողմից - Վերջին 12 ամսվա եկամուտների և ծախսերի հաշվետվությունները /գրառումները /առկայության դեպքում/ - Ինքնազբաղվածների եկամուտների գնահատման վերլուծություն համաձայն ՈՆՍ-ի Հավելված 1-ում ներկայացված ինքնազբաղվածների եկամուտները գնահատելու մեթոդաբանության կամ ԳՖՀ կողմից սահմանված համանման մեթոդաբանության /վերլուծությունը կատարվում է Վարկատուի կողմից և ներկայացվում այնպես, որ առանց որևէ դժվարության հասկանալի լինին 3-րդ անձի համար/, Այն դեպքերում, երբ վարկառուն/համավարկառուն միևնույն ժամանակ հանդիսանում է տվյալ կազմակերպության հիմնադիրը /սեփականատերը/ և տնօրենը /գործադիր մարմնի ղեկավարը/, ապա վերջինիս եկամուտները պետք է գնահատվեն Հավելված 1- ում ներկայացված մեթոդաբանությամբ, հակառակ դեպքում, եթե նա ներկայացնում է աշխատավարձի վերաբերյալ տեղեկանք, ապա տեղեկանքում նշված գումարը պետք է հավաստվի ներքոթվարկված տարբերակներից որևէ մեկով. - Կատարվելիք ծախսերի նախահաշիվ - Կառուցապատման փուլերի նախագիծ /սահմանված ձևով/: • Կազմակերպության պաշտոնական՝ հարկային մարմինների կողմից հաստատված հաշվետվությունների վերլուծության միջոցով, կամ • ՀՀ Սոցիալական ապահովության ծառայությունից համապատասխան տեղեկանքի միջոցով: - «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է սպառողից «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ սպառողին: Գույքի վեաբերյալ փաստաթղթեր. - Հողամասի սեփականության վկայական - Կառուցապատման թույլտվությունը - Կառուցման օրենքով սահմանված կարգով հաստատված նախագիծը - Կատարվելիք ծախսերի նախահաշիվ

		- Կառուցապատման փուլերի նախագիծ /սահմանված ձևով/:
33	**Այլ պայմաններ**	Շահառուի կարգավիճակ շնորհվում է՝ ծրագրի պայմաններին և պահանջներին համապատասխանությունը ստուգելու, ինչպես նաև քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններից ինքնաշխատ եղանակով շահառու ամուսինների ամուսնության պետական գրանցման, երեխաների առկայության դեպքում՝ երեխա-ծնող կապի, միայնակ ծնողի դեպքում՝ մյուս ծնողի մահվան վերաբերյալ տեղեկատվությունը 10 աշխատանքային օրվա ընթացքում ստանալու արդյունքում: ՀՀ կառավարության 19.03.2026թ. N 307-Լ որոշման 3-րդ կետի համաձայն շահառուների թվի հավելումը տարածվում է բացառապես. 1) 2025 թվականի մայիսի 1-ի դրությամբ սահմանամերձ գյուղական բնակավայրերում անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով շինարարության թույլտվություն ստացած կամ այդ նույն նպատակով 2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի մայիսի 1-ն ընկած ժամանակահատվածում հողամաս ձեռք բերած (ամուսիններից առնվազն մեկի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացրած) շահառուների վրա. 2) Տավուշի մարզի Այգեձոր, Այգեպար, Արծվաբերդ, Մովսես, Չինարի, Չորաթան, Պառավաքար, Վերին կարմիր աղբյուր, Բարեկամավան, Ոսկեվան, Ազատամուտ, Կայան, Վազաշեն, Սյունիքի մարզի Բարձրավան, Խնձորեսկ, Շուռնուխ, Որոտան, Բարգուշատ, Գեղանուշ, Գոմարան, Դավիթ Բեկ, Դիցմայրի, Եղվարդ, Խդրանց, Ծավ, Կաղնուտ, Ճակատեն, Ներքին Հանդ, Շիկահող, Սզնակ, Սյունիք, Սրաշեն, Վարդավանք, Ուժանիս, Խոտ, Արավուս, Խնածախ, Խոզնավար, Կոռնիձոր, Վաղատուր, Տեղ, Քարաշեն, Արարատի մարզի Տիգրանաշեն, Գեղարքունիքի մարզի Վահան, Ներքին Շորժա, Նորաբակ, Վերին Շորժա, Վայոց ձորի մարզի Բարձրունի, Խնձորուտ բնակավայրերում անհատական բնակելի տուն կառուցելու (կառուցապատումը շարունակելու) նպատակով դիմած շահառուների վրա: Ընդ որում, այս դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունիսի 9-ի N 842-Լ որոշման (այսուհետ՝ որոշում) հավելվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետի «ա», «բ» կամ «գ» պարբերություններով սահմանված պայմաններից բացի, ծրագրի շահառուները (ամուսիններից առնվազն մեկը) ծրագրին դիմելու օրվա դրությամբ նախորդ 1 տարվա ընթացքում պետք է հաշվառված լինեն տվյալ բնակավայրում. 3) Արագածոտնի մարզի Լուսակն, Հացաշեն, Սորիկ, Գեղարքունիքի մարզի Ավազան, Արփունք, Լեռնահովիտ, Վայոց ձորի մարզի Գոմք, Չիվա, Տավուշի մարզի Կիրանց, Աճարկուտ, Դովեղ, Լոռու մարզի Հագվի, Ամոջ, Մեդովկա, Սյունիքի մարզի Գորայք, Ծղուկ, Իշխանասար, Շաքի բնակավայրերում անհատական բնակելի տուն կառուցելու (կառուցապատումը շարունակելու) նպատակով դիմած շահառուների վրա: Ընդ որում, այս դեպքում որոշման հավելվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետի «դ» պարբերությամբ սահմանված պայմաններից բացի, շահառուները ծրագրին դիմելու օրվա դրությամբ նախորդ 1 տարվա ընթացքում չպետք է ունենան անձնական կամ ընդհանուր համատեղ կամ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով (50 տոկոս և ավելի մասնաբաժնով) պատկանող բնակելի անշարժ գույք Երևան քաղաքում կամ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքով սահմանված կարգով գրանցված գնման իրավունք Երևան քաղաքում: Եթե շահառուի կարգավիճակ ստանալուց հետո առավելագույնը 3 ամսվա ընթացքում չի կնքվում հիփոթեքային վարկի պայմանագիր, ապա շահառուի կարգավիճակն ինքնաշխատ եղանակով չեղարկվում է: Բանկի կողմից փաստացի տրամադրված գումարները շահառուի կողմից փոխհամաձայնեցված եղանակով կամ դատական կարգով ենթակա են վերադարձման պետությանը հետևյալ դեպքերում ՝ • Հիփոթեքային վարկի գործողության ընթացքում շահառուի (վարկառուի) մահվան դեպքում, եթե շահառուի ժառանգը շահառուի ամուսինը կամ երեխան չէ: • Բանկի հետ վարկային պայմանագրի կնքման օրվանից 3 տարվա ընթացքում շահառուի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտական ակտը Բանկ չներկայացվելու դեպքում:»: • Համաձայն աջակցության ծրագրի՝ փուլային տրամադրման ընթացակարգը խախտելու

		դեպքում: Սույն ծրագրով նախատեսված աջակցությունն ամբողջությամբ դադարում է հետևյալ դեպքերում • հիփոթեքային վարկի ամբողջական մարման դեպքում, • հիփոթեքային վարկի գործողության ընթացքում գույքի նկատմամբ սեփականության իրավունքն այլ անձանց անունով գրանցելու դեպքում (անկախ բաժնեմասի չափից), • հիփոթեքային վարկի գործողության ընթացքում տվյալ վարկի գծով 90 օրվանից ավելի ժամկետանց պարտավորությունների առկայության դեպքում, պետության կողմից կատարված ամենամսյա մարումների հանրագումարային արժեքի սահմանված չափը լրանալու դեպքում:
34	**Վարկային հաշվի գծով քաղվածքի/տեղեկանքի տրամադրում՝**	"Յունիբանկ" ԲԲԸ գործող "Հաշիվների բացում, սպասարկում, փակում և կանխիկով գործառնություններ"-ի սակագների համաձայն, որոնց կարող եք ծանոթանալ Բանկի ինտերնետային կայքում՝ Հաշիվների բացում, սպասարկում, փակում և կանխիկով գործառնություններ — Յունիբանկ հասցեով:

ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ԿԱՐԵՎՈՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Տոկոսադրույքների հաշվարկման կարգը

Յունիբանկի հաշվարկային տոկոսադրույքի (ՅՀՏ) մեթոդաբանություն:

Տոկոսների հաշվարկ.Ուշադրություն՝ վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը Ձեզ համար և վարկի տրամադրման և սպասարկման գծով բոլոր պարտադիր վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում:

[1]**Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգը կարող եք գտնել** այստեղ: Վարկային պայմանագրի գործողության ընթացքում Բանկի կողմից անվանական տոկոսադրույքի փոփոխություն չի նախատեսվում, եթե վարկառուն չի խախտում պայմանագրով սահմանված պայմանները:

2. Հաճախորդի իրավունքները և մարման կարգը

Անհատական թերթիկ. ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼԻՍ ԲԱՆԿԸ ՁԵՋ ԿՏՐԱՄԱԴՐԻ «ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ», ՈՐՏԵՂ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԿԼԻՆԵՆ ՁԵՐ ՎԱՐԿԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ:

Հրաժարվելու իրավունք. Հաճախորդն իրավունք ունի առանց որևէ տույժի միակողմանիորեն լուծել վարկային պայմանագիրը դրա կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում՝ վճարելով միայն փաստացի օգտագործված օրերի տոկոսները:

Վաղաժամկետ մարում. Հաճախորդն իրավունք ունի ժամկետից շուտ կատարելու (մարելու) վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ անկախ այն հանգամանքից, թե նման իրավունք պայմանագրով նախատեսված է, թե ոչ:

Վարկի վաղաժամկետ մարման դեպքում համամասնորեն նվազեցվում են վարկավորման ընդհանուր ծախսի մեջ ներառված Բանկի եկամուտը ձևավորող վճարները: Հաճախորդն իրավունք ունի ժամկետից շուտ կատարելու (մարելու) վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ անկախ այն հանգամանքից, թե նման իրավունք պայմանագրով նախատեսված է, թե ոչ:

Մարումների հերթականություն. Ժամկետանց պարտավորությունները մարվում են հետևյալ հերթականությամբ՝ դեբիտորական պարտք, պետական տուրք, արբիտրաժային վճար, դատական ծախսեր, տույժ, տոկոս և վարկ:

Բանկի ինքնասպասարկման սարքերի (ՖԳԻԱՍ) միջոցով վարկերի մարումը, ինչպես նաև հաշիվների, քարտերի և ավանդների համալրումն իրականացվում է առանց միջնորդավճարի:

3. Պարտավորությունների չկատարման հետևանքները

Վարկային բյուրո. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԿԱՏՈՒՆ 1 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ (ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆԸ ԵՌՕՐՅԱ ԺԱՄԿԵՏՈՒՄ) ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵՋ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:
ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԿԱՏԱՐՄԱՆ ԵՒ ԳՐԱՎԻ ՀԱՇՎԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ, ՎԱՐԿԱՌՈՒԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԾԱԾԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՐԱՎԸ ԲԱՎԱՐԱՐ ՉԼԻՆԵԼՈՒ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ, ՀՆԱՐԱՎՈՐ Է ՊԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐՈՒՄ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԻՆ:

Վարկային պատմության բարելավում. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ, ԿԻՐԱՌՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՔԱՅԼԵՐԻ ՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԱՆՐԱՄԱՍՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԾԱՆՈԹԱՆԱԼ ԱՆՑՆԵԼՈՎ https://www.unibank.am/hy/about/loaninfo2.php ՀՂՈՒՄՈՎ:

4. Կապի միջոցներ և հաղորդակցում

ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:

UNIMobile հավելվածը ներբեռնելու և մանրամասն տեղեկատվություն ստանալու համար կարող եք անցնել հետևյալ հղումով՝ Մոբայլ բանկինգ — Յունիբանկ:

Բանկի հետ կապ հաստատելու այլ միջոցներն են.

- Հեռախոսակապ. Թեժ գծի կենտրոն կամ Քարտապանների սպասարկման շուրջօրյա ծառայություն (այդ թվում՝ Viber, WhatsApp, Telegram հավելվածներով):
- Էլեկտրոնային հաղորդակցություն. unibank@unibank.am և support.plasticcard@unibank.am էլեկտրոնային հասցեներ, ինչպես նաև UNIMobile հավելվածի «Կապ Բանկի հետ» բաժինը:
- Սոցիալական հարթակներ. Բանկի պաշտոնական էջերը Facebook, Instagram և LinkedIn սոցիալական ցանցերում:

5. Լրացուցիչ տեղեկատվություն

«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով՝ Բանկը կարող է «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա սպառողից պահանջել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկություններ, տալ հավելյալ հարցեր (այդ թվում՝ բանավոր հաղորդակցման ընթացքում), ինչպես նաև իրականացնել տվյալների լրացուցիչ հավաքագրում:

Վերջինս կարող է իրականացվել նաև միջազգային համաձայնագրերի (օրինակ՝ FATCA համաձայնագրի) շրջանակում՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու կամ այլ անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու նպատակով:

«Ձեր ֆինանսական տեղեկատուն»՝ www.fininfo.am

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ «ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ ԵՎ ՁԵԶ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ-Ն ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԲ ԿՈՂՄԻՑ: